

ամառը, լճի երեսին լողում էին անհամար սագեր, լուսեր, ճայեր, կիվիվներ, ձկնկուլներ և այլ թռչուններ:

Գարունը դեռ լրիվ չրացված, բարձր բարդիների կատարներին և դուղական մի քանի հին ամրոցների (սթարի կոնաձե կառուցվածք՝ մեջը ցան լցնելու համար) ղիկներին գրած իրենց ըններ նորագույն էին դալիս գարնան առաջին ավասարներինը՝ արագիլները և շրջապատը լցնում իրենց կտուցների կափկասփումներով: Արտերում թռչկուտում էին սերմնադոմանները, սարյակները, արատյաններն ու գեղնափորիկները, քարերի արանքներում ուստոստում էին լորերն ու կաքավները, ամենուրեք իրենց պայծառ ու երփնելու հիստուրներով փայլիլում էին ներկարարներն ու մեղվաբալները, ծառաստաններում տարածվում էր հո-

պոպները կանչը, սրահների ու խորթանոցների պատերին իրենց կավաչեն ընկներն էին ձեփում շինականների սիրելի ծիծեռնակները, օդում ետանկյունի կաղմած, կոկոցներով իրենց վերադարձն էին ավետում կուռնկները, Գյաղնայի իւրունկ ու երկար կիրճի ժայռակույտերում բույն էին դնում պոռնուկների մեծության, անձեռնմխելի սրբություն անաչված ծանրաթուղ արոսները, բակերի վրայով սավառնում էին հավի ճակերին սիրահար ուրուները:

Թռչունների բազմազանությունը ամուսն էլ Չմուսնը մնում էին ազոավները, ճնճողներն ու կաքավները: Չմուսնը որս անելը մեղք էր համարվում: Անասնակների գնացող շինականները կողովներ էին շարտում քուջուջ անող կաքավների վրա և բռնում:

### ԱՐՃԱԿԻ ԳԱՎԱՌԻ ԳՅՈՒՂԵՐՆ ՈՒ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Արճակն առաջներում եղել է զուտ հայկական պավաճ՝ երեսունից ավելի դուղերով:

Վերջին շրջանում հայկական էր մնացել միայն վեց գյուղ:

1. Արճակ (դավառի կենտրոն), բաղկացած 60 տնից:
2. Խառակոնիս (Արճակին ամենամոտիկ գյուղը), բաղկացած 200 տնից:
3. Կրգրջա (լճի հակադիր ափին), 55 տուն:
4. Մխկրներ (նույն ափին), 60 տուն, հայտնի էր կավատի մշակումով և ձիթավաճառությամբ:
5. Նարաք՝ 20 տուն:
6. Պալսեղիկ՝ 16 տուն:

Այնուհետև գալիս էին այլ ընակչություն ունեցող, երբեմն հայախառն գյուղեր:

7. Գյեղալավա, ուր կեսից ավելին հայեր էին, մյուսները՝ ասորի: Ընկած էր Վան տանող ճանապարհին: Գյեղալավայի բաղամարտը մարգագեղանը ուղևորների հանգստավայր էր: Եթե մի ընտանիքի մասին խոսք լիներ, թե նրանց ասանը բաղամարտի երթեկներ են լինում, ասում էին՝ «Գյեղալավու շիման ի, մեյն կըլնի, տասն կիճնի»:

8. Խնու, զուտ ասորական հին գյուղ, ուներ իր հողերը հովիվը՝ կաշա (քահանա), որը 1915 թ. եղեռնի օրերին քաշարար մարտնչում էր Արճակից Վան փախչող ինքնապաշտպան հայերի շարքերում:

9. Աղաաշ, քրդական գյուղ, Արճակից բաժանվում էր մի բարձր բլրով: Ստ նախկինում եղել էր զուտ հայկական գյուղ: XVIII դարավերջին այնտեղ անդավորվել էր մի քանի տուն քուրդ:

Եկվորները հետզհետե աճելով, սկսել էին ճնշել հայերին այնքան խստորեն, որ վերջիններս ցրվել էին:

10. Մալավա, սա դուցե դավառի ամենից շուտ հիմնադրված քրդական գյուղը լինելու: Գյուղացիք պատկանում էին ոչ համիդիե աշիրաթների ցեղախմբերին և զրաղվում էին հողագործությամբ ու անասնապահությամբ:

11. Քրդվան, հիմնադրվել էր նախկինում Արճակին պատկանող հողամասում, հետզհետե ընդլայնել իր տարածությունները և առաջացել մինչև ս. Սարգիս կոչված բլուրն ու կանգ առել, տիրելով բլրի արեելյան մասին: Բնակիչները համիդիե չէին, զրաղվում էին հողագործությամբ ու խաշնարածությամբ: Արճակ գյուղը առավելագույն Քրդվան գյուղի քրդերից էր վարձում գյուղի նորագարին (պահապան):

Քրդվանցիներն առանձնակի հարգանք ունեին արճակցի հայերի հանդեպ, որովհետև արճակցի շյուներ էին ու նրանց համար սայլ ու դուրան էին շինում կամ նսրոգում: Իսկ քրդերն սրհնասուր բարձր դնահաաող ժողովուրդ են:

12. Վերին և ներքին Մագրա, հիմնվել էին 1850—55 թվականներին: Փոքրիկ գյուղեր էին ու պատկանում էին երկու քուրդ ընկերի:

13. Ռաճմիճ, փոքրիկ քրդական գյուղ էր, համեմատաբար հին, ընակչությունը զրաղվում էր սխարապահությամբ, հողագործությամբ և մանր ավաղակությամբ:

14. Կեանք, քրդական գյուղ էր, ընակիչները ղրաղուտները՝ խաշնարածութիւնն էր ու երկրագործութիւնը:

15. Ազկաւա, սա ևս, ինչպես հարեան Քըրգ-վան գյուղը, հիմնվել էր երրեմնի Արճակին պատկանող ամենահեռավոր հողամասերում: Հիմնել էին Ղրիմից եկած շերքեղները և որպես շերքեղական գյուղ, գաղաւտում միակն էր: Չերքեղներից բացի, այստեղ ապրում էին նաև մի քանի քուրդ ընտանիք:

16. Մանդան, մինչև 1900-ական թվականները զուտ հայկական գյուղ էր եղել: 1896 թվականին՝ 35 տուն ունեցող հայկական գյուղը 15 տարի անց 33 քրդական ընտանիք ուներ: Մանգանում մնացած փոքրաթիվ հայերը նորածիններին մկրտում էին Արճակի կամ Խառակոնիսի եկեղեցիներում: Մննգյան ու Հարության առնների նախօրյակին, երկու մանգանցի գալիս ու իրենց գյուղն էին առաջնորդում Արճակի ավագ քահանային՝ հսկող դործերը հոգալու:

17. Հաշվաշատ, գյուղի կալվածատերը Աղարեկ Լֆեհեդի անունով մի վանեցի թուրք էր: Նա հնուց բարեկամական կապի մեջ էր Արճակի մի քանի տոհմական ընտանիքների հետ: Ամեն աշնան, երբ Արճակի ու Խառակոնիսի ուխտավորները գնում էին Տիրամեր, առաջին օրը գիշերում էին Հաշվաշատի հայերի մոտ:

18. Հագաւա, հին հայարնակ գյուղ էր, քրդ-գախառն էր գարծել վերջին հարյուրամյակում: 1915 թ. փետրվարին հաղարացի հայերը, տեղյակ լինելով ոռոակական բանակի ու կամավորական անգերի նահանջին, նույն գիշերը վերցնելով իրենց անասունները, գյուղից փախան: Քսանից ավելի ընտանիք եկավ Արճակ (ուր մնացին մինչև ապ-րիլ), մնացյալները՝ վանին ավելի մոտիկ գյուղե-րը: Արճակ եկած հաղարացիները մինչև վերջին ուղհը մնացին այնտեղ ու ղոհվեցին:

19. Հասվասաւ, սա Արճակից ամենահեռու ընկած գյուղն էր: Այստեղի հայերը 1915 թ. հայ կամավորական ջոկատների հետ կարողացան հեռանալ Կովկաս և փրկվել կոտորածներից:

20. Զաւաւնց, 35 տուն ունեցող հայկական գյուղ էր, ուր նաև երկու տուն քուրդ էին վերա-րնակվել:

21. Բոզագբյասա<sup>1</sup>, հայկական գյուղ՝ քսան տուն:

22. Տաղվերաւ, 32 տուն հայ, երկու տուն քուրդ:

Արճակի գաղաթի մեջ էին մասնում նաև՝ Լիմ, Աւան, Զոպանօղլու, Կարթալան, Շամջադին, Աղջաշայ, Զախամախ, Սաթիրեկ քրդախառն գյուղերը:

## Ա Ր Զ Ա Կ Գ Յ Ո Ւ Ղ Ը

Արճակ գյուղը գանվում է համանուն լճի արևելյան ափի հարթավայրում: Գյուղի արևմտյան կողմից մինչև լիճը ծաղկուն ու բազմաբլուր մարգագետին էր: Մարգագետնի մի մասը՝ լճափին մոտիկ, տեղ-տեղ ճահճոտ էր, որից հետո եղեգ-նուտն էր՝ մինչև լիճը: Գյուղի ու մարգագետնի արանքում կար ե ավաղուտ:

Դեպի արևելք ու հյուսիս-արևելք տասնյակ կիրճերով արածաված էին գյուղի հարթ ու բեր-րի վարելահողերն ու արոտավայրերը:

Գյուղի հարավակողմի մարգագետնային հար-թությանում էր գանվում հայկական Խառակոնիս<sup>2</sup> գյուղը: Երկու գյուղերի սահմանն էր Խառակոնսա

գետը, որ թափվում էր Արճակի լիճը: Տեղացիներն այդ գետն անվանում էին Ճաշ կետ, ի տարբերու-թիւն Արճակի գետի, որը շատ սակավաջուր էր և կոչվում էր Պըսաիկ կետ:

Գյուղի հյուսիսակողմից, լճում եղած փոքրիկ հրվանդանից սկսելով և հեղհեղաձգվելով գետի արևելք, Արճակ գյուղի հովաթի մի մասը օղակում էին մի շարք գեղանիստ բլուրներ, որոնք գագաթ առ գագաթ բարձրանալով գետի վեր, միաձուլվում էին Աղտաշա, Գնձան, Առճակու կամ էրկրթիներ կոչվող լեռներին:

հարեան, բարգինների հարուտ ծառատաններով օղակված Խառակոնիսը Արճակի գաղաթի ամենամեծ հայարնակ գյուղն էր: Տարագների նիստուկացի, ընտանեկան սովո-րութիւնների, նույնիսկ բարբառների տարբերութիւն համարյա գոյութիւն շուներ, եթե հաշվի լառնվի աճուղ բառի փոխարեն աճուղ ասելը, թանով սպասին արճակցոց պաւ, խառակո-նիսցոց ապուր ասելը:

Բնավորության գծերում աչքասու տարբերութիւն կար:

<sup>1</sup> Այս և հաջորդ գյուղերի մասին տեղեկութիւնները վերցված են Ա-ԳՕ-ի 1921 թ. Երևանում լույս տեսած «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» գրքից:

<sup>2</sup> Վանի նահանգում լայնորեն տարածված էր «Առճակ-Խառակոնիս» ակն աշխրբիս» ասացվածքը: Այս գյուղերը լճափնայ նույն հարթության վրա էին տարածված, միմ-յանցից մի քանի կիրճերով հեռու: Արճակին ամենամոտիկ